

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»ի
Աղեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
ՉԼԸ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Փ Ի Ի Կ

ԱՐՏԱՍԱՄԱՆ
ՏՐ.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է



Շ Ա Ր Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱՆՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐՔ

3 ՕԳՈՍՏՈՍ 1901

ԹԻԻ 9

ԱՂԵՔ ԵՒ ՄԱՐՏԱՐԵԿԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍ.

ՎԱՆԱՐՄԱՆԻՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. Ը. քիւէն եւ վերջ)

Սակայն ինչո՞ւ մատնանիչ ընել հայկական երգերու պակասը՝ Մանկապարտէզէն, երբ, քաղքիս միակ ազգ-կրթական յարկին տակ, շարաթ մը տեւող հարցաքննութեանց ամբողջ ընթացքին մէջ, չ'լուսեցաւ վանկ մ'անգամ երգերէն, որոնց այնքան կարօտը կը քաշէ հայրենաբազմութեան ախտէն մաշուող պանդուխտը. ի՞նչ կ'ըլլար, եթէ անպէտք թիւններէն մէկուն տեղ ալ ազգ. երգերու դաս մը զետեղուած ըլլար Պօլոսեան վարժարանին յայտադրին մէջ, (եթէ այս վերջինը գոյութիւն ունի հոն)...

Մանկապարտէզն աւարտեց իր փորձերն ճիշդ կէս օրին:

Կարճ միջանկեալ մը.

Պօլոսեան վարժարանը յաճախող

երկսեռ աշակերտաց ծնողները, պարագաներն ու ասոնց բարեկամները, կրթական հարցով շահաբերուող ազգայիններու փոքրամասնութիւն մը, և մանաւանդ, նոյն վարժարանին նախկին ու արդի պաշտօնեաները շատ բնական ու դիւրամբունելի հետաքրքրութեամբ մը պիտի հետեին անտարակոյս հարցաքննութեանց այս տեղեկագրին, որ հիմնուած է անաչառ ու խղճամիտ հետախուզութեան մը վրայ: Եթէ կայ անտարբեր մը, ան ալ վարժարանին հոգաբարձութեան ծանր բեռին տակ կ'ընեն ու թատուն անձնաւորութիւնն է, որ սակայն Աղեքսանդրեան գոռոզութեամբ մը կտրեց Կորտեան հանգոյցը, ոտքը չ'գնեցով հարցաքննութեանց սրահները...

Կարգացոյցին մէջ նշանակուած կարգով չէ՛ որ պիտի նկարագրենք հարցաքննութիւնները, այլ վարժարանին Մանկապարտէզէն յետոյ եկող Ընտելաբանին պիտի անցնինք և աստիճանաբար միշտ գէպ 'ի վեր:

Հետեւյալներն միակ դաստիարակ

ուսուցչուհին Օր. Նուարգ Թաթարեան, պաշտօնին փարած, բաւական անձնուէր, ու մանաւանդ եռանդուն վարժուհի մը, որ, իր մատղաշ սանիկները կը դաստիարակէ, կը կրթէ համակրանքի, դորովոյ, սիրոյ քաղցրիկ ու սիրելի լուծին տակ. հետեւաբար, միակ պաշտօնեան է անի, որ կոչուած ըլլայ պատրաստելու գեռափթիթ մանկելումի մը սրտերն ու մարգելու անոնց մտքերը: Ես այս կարծիքը հրապարակաւ յայտնելու իրաւունքս կը պարտիմ այն բարեբազմութեան, զոր ունեցայ, ներկայ գտնուելով Ընկերարանի հարցաքննութեանց: Աշակերտներն առ հասարակ, գրեթէ առանց բացառութեան, գոհացուցիչ պատասխաններ տուին իրենց ուղղուած հարցումներուն, հպարտ գիտակցութեամբ մը, առանց կամեալու կամ վարանելու: Մասաւոր հաշիւներ, փոքրիկ մանրակէպեր, Ս. Գրքէն ընտրուած կտորներ, արտասանութիւն, ընթերցում, գիր. այս ամենուն մէջ ալ, աչքի զարնող յաջողակութիւն ու յառաջգիւտութիւն մը տեսանք. ու այս ամենը պատուաբեր է անշուշտ այն անձնուէր, անխոնջ ու իր պաշտօնին փափկութեանը գիտակից օրիւրդին, որ, պէտք է խոստովանիլ, խենթի պէս կը սիրէ իր սանիկներն:

Կրօնի գասերը կ'աւանդէ Տ. Յարութիւն քհ. Յակովբեան, ոչ բազմատամբ միւս կարգակցին, աւելի զարգացեալ կը համարուի, չ'արգարացներ սակայն իր վայելած կրօնագիտի համբաւը. ամբողջ կարգ մը, Յովսէփ Գեղեցիկով ու Աքրահամով անցուց կրօնի հարցաքննութիւնները, փոքրներէն մինչև մեծերը, նոյն երաշխական պատմութիւնն սովորած էին բերանայի: Սրբազան Առաջնորդը, որ ներկայ էր, իրաւամբ գիտել տուաւ թէ լաւագոյն էր աւանդել Նորէն քան թէ Հինէն. Յիսուսի հրաշքներն ու առականներն աւելի պիտի ազդէին մատաղ մտքերուն, քան Հրէից պատմութիւնը, որ ո՛չ նուազ դայթակղալից միջադէպեր կը պարունակէ:

Պ. Մեսրոպ Նորասունկեան, կեզր. վարժարանի նախկին սաներէն, Հայերէն, Իրագիտութիւն ու Աշխարհագրութիւն կ'աւանդէ ստորին կարգերուն և Ազգ. Պատմութիւն բոլոր բարձրագոյն կարգերուն: Սա՛ չափազանց յարած ու փարած է իր դործին, որուն մէջ անձնուիրութիւն ու ջանք չ'է խնայած. իր հասուցած աշակերտները լաւագոյն պատասխանները տուին:

Կը շեշտուէր Բ. և Գ. կարգերուն միջև խոտորնակ տարբերութիւն մը, հայերէնի մէջ. ցաւալի՛ իրականութիւն, Բ. կարգը — որ մէկ տարուան անջրպետով մը պէտք է ետ մնացած ըլլար Գ. էն — հայերէնի մէջ յաջող քննութիւն մը անցուց. ընթերցումին և ուղղագրութեան մէջ անոնք աւելի քաջավարժ դտանք քան Գ. կարգը, որուն ուղղագրութեան տետրակներուն մէջ 8, 9, 10 նիշերը գրուած էին, հակառակ 5, 6, 7, 8 տառասխալներուն, որոնց թիւը չ'էր նշանակուած: Սակայն Ազգ. Պատմութիւնը, դասերուն կարեւորագոյնը, չ'եմ գիտեր ի՞նչ մտածումով, զանցառելի քանակի մը պէս թողուած էր. հակառակ Պ. Մ. Նորասունկեանի անվիճելի եռանդին, Գ. և Գ. կարգերը միացուցուած, Ե. և Զ. կարգերն ալ մինչև Արշակունեաց վերջերն ու Բագրատունեաց սկիզբը հասուցուած էին. դասաւանդութեան եղանակն ալ քննադատութենէ զերծ չ'էր մնար. թուականներն ու պատերազմներն աւելի սերտած էին, քան թէ շարժառիթները, թաղաւորներուն ու նախարարներուն քաղաքականութիւնը, երկրին դիրքերն ու դրացիներուն հակառակութիւնները: Հայաստանի աշխարհագրութիւնը սովորած էին այնպէս ինչպէս Պ. Կէսի (այս է անունը Փրանսացի Հոկոլին, որ ուսուցիչ էր միանգամայն բարձրագոյն կարգի Աշխարհագրութեան, զոր Փրանսերէն աւանդած է.) աշակերտները սովորած էին իրենց աշխարհագրութիւնը. լոկ անուններ քաղաքի, գետի, լեռի ևն. ուրիշ ոչինչ. . . : Այսու հանդերձ, նկա-

տելով ընդհանուր քանակը գասերուն, որոնց ուսուցումով ծանրաբեռնուած էր Պ. Մ. Նորատունկեան, անկից աւելին սպասել կը նշանակէ անգիտանալ մասնագիտութեան գոյութիւնը:

Պ. Միհրան Յոյսեփեան, վաղեմի դէմք մը, որ վեց ամսէ 'ի վեր կարգուած է ուսուցիչ Անգլիերէնի ու բարձր կարգերուն Թուաբանութեան ու Իրագիտութեան, հարցաքննութեանց սկիզբէն մինչև վերջը հիւանդ ու խօսելու իսկ անտրամադիր գտանք: Արդար ըլլալու համար յայտարարենք թէ՛ այս երկու վերջին ճիւղերուն մէջ, որոնք այնքան կտրուոր են, ընդհանրապէս յաջողակ չ'գտանք աշակերտները, մինչդեռ Ե. և Զ. կարգերուն Անգլիերէնը՝ գոհացուցիչ էր. ասի հաստատեց ներկաներէն (հրաւիրեալ չ'հասկնաք) Պ. Տիրան Պ. Զաքարեան Երուսաղէմացի անգլոլաբան երիտասարդը, որ անձամբ հարցումներ ուղղեց: Յիշե՛նք մասնաւորապէս Օր. Ենիկէ ձէվահիրեանը, սրամիտ ու ժրաշան աշակերտուհին, որ ութ տողով Ֆրանսերէն հատուած մ'անգլիներէնի վերածեց անսխալ, առանց դժուարութեան: «Փիւնիկ»ի տնօրէնը, ականատես այսքան զգալի յառաջդիմութեան մը, մէկ տարեկան «Փիւնիկ» նուիրեց 'ի վարձատրութիւն յիշեալ տաղանդաւոր Հայուհիին, և ասի միւս ընկերակիցներուն բարի նախանձը յուզելու նպատակաւ:

Պ. Կէս, ինչպէս վերև յիշեցինք, անցեալ տարիները ձիպութիւն մէջ, առ 'ի չ'գոյէ օրէնսդէտի, փաստաբանութեամբ պարապած ու վերջերս Ազգաբանագրիս եկած վառվռուն Ֆրանսացի երիտասարդը կը յարկ թողակով մը հսկող կարգուած է Պօղոսեան երկսեռ վարժարանին, ինչպէս նաև Ֆրանսերէն լեզուի և Աշխարհագրութեան ուսուցիչ: Այս օտար պաշտօնէին նկատմամբ ի՞նչ կրնանք գրել: Վասպուրահանցի պատանին Պ. Պետրոս Շասախցեան, հարցաքննութեանց վերջին օրուան վերջին վայրկենին՝ հրապարակաւ յայտարարեց արդէն այդ Ֆրանսացիին

հսկողութեան ի՞նչ ըլլալը. — Ֆրանսերէնը շանացած էր սովորեցնելու, որչափ որ կրնար. իսկ Աշխարհագրութիւնը, Ֆրանսերէնով աւելի լաւ կ'ըլլար որ չ'աւանդուէր, որպէս զի Զ. կարգը գոնէ քիչ մը գաղափար ստացած ըլլար, հայերէնով, Աշխարհագրութեան վրայ: Ոչ բնակիչ, ոչ տարածութիւն, ոչ կառավարական ձև, ոչ ցեղ, ոչ կրօնք, ոչ զինուորական ոյժ, ոչ երկրաւան վիճակ. միայն քանի մը լեռներու, դետերու, քաղաքներու, ծովերու, նեղուցներու անուններ, աշխարհիս հինգ մասերէն. ա՛յս էր պաշարը, զոր հայթայթած էր Պ. Կէս իր ա՛յնքան աշխատասէր աշակերտներուն:

Պ. Լեւոն Մկրտիչեան, Թաղ. Խորհրդին գրագիրը, վարժարանին Տնօրէն Պ. Յակոբ Պէքարեանի հրատարակեց յետոյ ստանձնած է անձնուիրաբար աւանդել Տօնարակայութեան դասը, 12 տարեկան 2 մանչուկներու, որոնք, դժբաղդաբար, Թուաբանութեան էական մասերը դեռ չ'էին գիտեր: Տեսանք Զ. կարգին ամենէն յաջողակ աշակերտը, որ հաշուեցուցակի օրինակ մը քաշեց գրատախտակին վրայ, եւ, պարզ զեղչի մ'առջև պապանձեցաւ մնայ. ի՞նչ յիմար բան. սոմարակալութիւն աւանդել այդ խլէշներուն, որոնք Թուաբանութեան այբուբէնը դեռ չ'են հասկցեր. . . :

Պ. Միհրան Ասֆանազ, հին հայկաբան, գրաբարի մասնագէտ, վաղեմի ուսուցիչ, գասական գրադիտութեան մը յօրինող, եւն, գրեթէ 5 տարիէ 'ի վեր կ'ապրի Պօղոսեան վարժարանին մէջ. նախ Տնօրէն, յետոյ հասարակ ուսուցիչ, Գ. կարգէն մինչև Զ. կարգը, ի՞նք աւանդած է հայերէն լեզուն ու. . . գրականութիւնը. ին՞չ որոշումներ ձեռնարկ մէթոտով ու պատուելիական ոճով աւանդուած հայերէն մը, կանոններու սեղմումներով: Յաւիտենական ուղղակի սեռակաւին հետ երանելի եւրոպական — սեռի ինքիսն ու ստորագրին. ահա՛ բովանդակ օգին հարցաքննութեանց. ընթերցումին՝

կուլար. արտասանութիւնը՝ Իործոց Ա. ուղեւորը կը բուրէր. կէտադրութեան դէմ հայհոյանք. միջակէտ, ստոր, բութ՝ հաւասար դադարը կը վայելէին. Իսկ գրադիտութեան դասը, հիանալի կատակախաղ. մէն մի աշակերտ, խելամտութեան, շրջաբանութեան, ևն, կանոնի մը հետ երկու օրինակ սերտած, մեքենայաբար պատասխան կուտար նախապատրաստուած հարցումներու... 'ի գիշ գայր 'ի գիշ, սալիկն 'ի գիշ գայր 'ի գիշ. ահա՛ մին այս օրինակներէն, զոր թութակի պէս արտասանեց դպրոցական մը, և որմէ դուրս ո՛ր և է օրինակի հանդէպ արձան կտրեցաւ: Ի լրումն և 'ի պսակ կատակերգութեան, Զ. կարգը՝ կարգալուելաւ շարագրութիւնները — որոնք ըստ միակ վկայութեան Պ. ուսուցչին, իրենց դրածներն էին — մտիկ ըրինք մինչև վերջին աշակերտը. Սրբազան Նախագահը ներկայ էր, Տեառն Ս. Փէլէկեանի, Ա. Ճիզմէճեանի, և այլոց հետ, (ասոնք ալ հրաւիրեալ չը հասկցուին): «Փիւնիկ»ի Տնօրէնը ցոյց տալով այս լուրջ ներկայացումին ծաղրելի կողմը, և փարատելու համար անվանելի կասկածը, որ բռնի մուտ գտաւ ըզեզներուն մէջ, առաջարկեց Սրբազան առաջնորդին, նոյն պահուն պարզ նիւթ մը տալ Զ. կարգին, շարագրելու համար հոն, ու այս կերպով յատուկ դադարիար մը կազմելու յիշեալ կարգին հայերէսին մէջ ստացած իսկական կարողութեանը վրայ, թէ՛ ոճին և թէ՛ ուղղագրութեան մէջ:

Սակայն, անդիէն, Տիկին Արմաւենի Միւնասեան, (վերջերս Կրէտէէն յատկապէս բերուած վարժուհին) որուն՝ վարժարանին Պ. Հոգաբարձուին կողմէն յանձնուած է եղեր հարցաքննութեանց վերին հսկողութիւնը, վարպէտ տառի մը պարկեշտութիւնը հագած, պաշտօնական շեշտով մը «Ժաննանակ չ'մնա՛ ց»ը դրաւ. թէ և Սրբազան Առաջնորդն ու իրեն հետ միւս Պատ. ներկաները՝ շատ բանաւոր գտան ու գործադրելի՝ «Փիւնիկ»ի Տնօրէնին ա-

ռաջարկը: Յաջորդ օրուան ձգուեցաւ, յետոյ միւս օրուան ու վերջապէս, շարագրութիւնները չ'եղան...:

Այս է ահա՛ անցողակի նկարագրութիւնը Պօղոսեան վարժարանին աւանակները հարցաքննութեանց, որ սկսան ու վերջացան մէկ շաբթուան մէջ, 'ի ներկայութեան միայն փոքրաթիւ այցելուներու, և 'ի բացակայութեան Պ. Հոգաբարձուին կողմէն հրաւիրուած անձնաւորութեանց, սրոնց մէջէն միայն Պ. Պ. Մկրտիչ Վարժապետեան ու Արամ Խարտեաչ ներկայ էին շաբաթ կէս օրէն յետոյ միայն, և որոնց մին ցաւ յայտնեց չ'գտնելով հոն զինք հրաւրող պարոնը...:

Հարցաքննութեանց եղանակին վերայ բառ մը. դասագրքէն դուրս, ո՛ր և է հարցում մը ներելի չ'էր, թէկուզ ուսուցչին բերնով, ուղղել աշակերտին: Տիկին վերահսկողուհին կը վարէր, կ'երթար կուգար, հարցարաններուն բաշխումն կը տնօրինէր. այդ հարցարաններուն բաշխումն ու բնութիւնը քիչ թէ շատ դպրոցէ հասկցող ի մը գանկին տակ մէկէ աւելի հանելուկներ կրնային ստեղծել: Երանի՛ թէ գրաւոր կատարուէին հարցաքննութիւնները:

Ձեռագործներու պակասը տեսնելու ահռելի պատրանքն ալ ունեցանք. թէ և նորեկ վարժուհին, աջակցութեամբ Պ. Ասքանազի, շանայ արդարացեալ այդ պակասը՝ կարգ մ'անկապ ու կցկտուր աւարկութիւններով. գէթ 'ի տես զնէին Օր. Սէմէրճեանի ձեռագործները...:

Իսլով արդիւնքին ու հանգամանքին, յայտնի է թէ անի՛ արդի ուսուցիչներուն աշխատանքը չ'ներկայացներ լոկ, այլ նախորդներուն ալ, որոնք վեց ամիս առաջ ստիպուած էին խմբովին հրաժարիլ: Հետեւաբար անոնց, մանաւանդ Պ. Յ. Պէքեարեանին վրայ կը ծանրանայ մեծագոյն բաժինը պարտականութեան, որ նուիրական է, և որուն գործադրութիւնն այնքան օգտաշատ է: Տնօրէն մը, որ տարիներով ու ա՛յնքան գնահատելի ձեռնհասութեամբ

պաշտօնավարած է. Տնօրէն մը, որուն ուղղամտութեան ու ատակութեան գէժ բիծ մը, բասրանք մը յերիւրեւել՝ ոճիր է. Տնօրէն մը, որ իր բոլոր անձն ու բոլոր ուժը նուիրած էր մատաղ սերնդին զարգացմանը. վերջապէս, Տնօրէն մը, որ դիտենք, իրօք նախանձախնդիր է իր թողած դպրոցին պատիւին ու բարձրութեանը, ինչո՞ւ կը լռէ արդեօք. ինչո՞ւ չ'պարզէր այն բոլոր շարժառիթները, միջին դասերը, որոնք վարժարանէն հեռացուցին զինք ու իրեն հետ Օր. Սէմէրճեանը, Պ. Պ. Գ. Եսայեանն ու Մ. Զրաքեանը: Սի'թէ խղճահարութիւն մը չը՞ տանջեր զինք. ու չը՞զգար անհրաժեշտութիւնը հրապարակելու ամեն դաղտնիք, որպէս զի միամտին գայթակղած մտքերը կարելոր յայտնութիւններու առջև:


Արդ, այս հարցաքննանքի խկական արդիւնքին վրայ բառ մ'իսկ չէ կարելի արտասանել, մինչև որ հրատարած Տնօրէնը մասնաւոր անչեզագրով մը չը պարզէ Պօղոսեան երկսեռ վարժարանին աչակերտաց ուսումնական կայութիւնը: Այդ տեղեկագրին հետ պէ՛տք է նաև հրատարակութեան ապ յոյն վարժարանին ուսմանց յայտագիրը, — որ անշուշտ կայ — ու առանց որոյ չէ կարելի վերջնական ձևին վերածել մեր եզրակացութիւնը:

Այս է Փիւնիկի կարծիքը:

Փափաքելի է նաև հասկնալ պարունակութիւնը տեղեկագրին, զոր Գեր. Սրբազան Առաջնորդնիս մատուցած է Հոգաբարձութեան, որուն կողմէն Գերագոյն Հսկող կարգուած է եղեր հարցաքննութեանց:

Երջանիկ ժամանակ, ուր հաւատարաւ գլուխը կը խոնարհի հասարակութեան իր հաւատարմութեան անդամներուն...

ՄԱՏՆԻՉԸ (1)



Բնիկ Արարկերցի, Գէորգ (Գեղամ) Վարդանեանի 1899ի օրերին ըրած ստորմատնութեանց մանրամասնութիւնը Ատեանի առջև խօսելու վերապահումով, առ այժմ կուգամ հրատարակու յայտնելու գաւաճանին զոհերուն մի քանիներուն անունները, որոնց ընտանիքը թշուառացած, իսկ իրենք ալ ենթարկուած բանտի ու շղթայի տաժան կեանքին. իւրաքանչիւրն 6-8-10 տարիների վճռով...:

1899ին անակնկալ ձերբակալումներ և ծանր բանտարկութիւններ սկսած էր իրենց մինչև Արարկի: Դաւաճանը Կարնոյ կուսակալին առջև խոստովանած էր այն ամեն գաղտնիքներու մասին, որքան որ ինք կըրցած էր գէշտալ: Երիզա, Բաղէ, Տիվրիկ եւ Գեղաստիա բանտարկուեցան շատ մը դատաւաններ, վաճառական-

(1) Սոյն յօդուածը կը հրատարակենք ո՛չ միայն ի գաւառիս յեզ. կուսակցութեանց ու եգիպտացի հայրենակցաց, այլ եւ հրատարակու հասարակելու համար այն անարժան Հայր, որ, ինչպէս կը Եսայիկ յօդուածագիրը, բանի բանի հայ ընտանիքներ ցտեղուցած է մոխրի վրայ, եւ որուն մասնութեամբ բանտարկուածները դեռ կը մաշին բերդերու եւ զնաններու մէջ: Թէ եւ, ըստ ոմանց, մասնիչ մը խայտառակել՝ անոր վերջնական ու անդառնալի դատովեհոր կենել է, բայց, միւս կողմէն, ծառայութիւն մ'է ան՝ մասնուցում՝ յեղափոխական Ս. Գործին:

Գալով յարգելի յօդուածագրին գութան այն մասին, որով կը մեղադրէ Տեղաւոյս Դաւեանց. Գօմիքեան, յիշեալին սիրալիք ընդունելութիւնը քամ ըլլալուն համար, հետեւեալ կերպով կը բացատրուի. Դաւեանցութեան համակիր կամ անդամ կարծուած անձնաւորութիւն մը՝ յանուն մարդասիրութեան յիշեալ պարտը հոգացած է ելեր, եւ անոր գործ մը գտնելու համար ջաներ ալ քամ. ասի սակայն, կ'ըսուի Ազն. Դաւեանց. Գօմիքեան կողմէն, չ'նշանակեր սիրալիք ընդունելութիւն կամ պաշտպանութիւն, եւ ո՛չ ալ մեղադրելի կ'ընէ ամբողջ Գօմիքեան:


ներ և նոր երիտասարդութենէն. . . իսկ Տիգրանակերտ, Եղբարք Պոյաճեան 8 տարի, Արաբկերէն Գաղիկ Տէվէճեան 6 տարի և Ակնէն Եղբարք Տէօվլէթեան ութ ութ տարի. իսկ Արաբկերի բանտէն կիսամեռ դուրս եկաւ և 4 օր յետոյ մեռաւ Գէորգ Մալուճեան, թողլով ետին, որք զաւակներ եւ ընտանիք:

Այս ամենէն յետոյ դաւաճանը յայտնի համարձակ կառավարութենէն ամսական 20 մէճիա ռոճիկով 10-15 հեծեալ զինուորներով սկսաւ շրջիլ Խարբերդի բոլոր հայ դաւաճները. . . ու այդ միջոցին կրկնելով իւր դաւաճանութիւնները, համարեա՛ երկրորդ համիտ մը ստեղծուած էր այդ թըշուառ դիւղացիներուն գլխին. զոհերուն թշուառութեանց մանրամասն նկարագրութիւնն ընել շատ երկար կը լինի: Ու այսօր. ամենէն ցաւալին այն է թէ՛ Այգեքսանդրիոյ Դաշնակցութեան կօմիտէն այդ դաւաճանին շատ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուած է: Արդեօք Ա. Ղն. Դաշ. կօմիտէն դիմեց Պոնտոսի ու Երիզայի Դաշնակցական ընկերներին. եւ եթէ դիմած է, մինչև ո՞ր աստիճան նպաստաւոր եղած են երկրին վկայութիւնները. դաւաճանը չ'կրնար խոյս տալ վկայութեանց առջևէն, իսկ ինքը Ա. Ղն. Դաշ. կօմիտէն կարող է դիմել Պոնտոսի և Երիզայի ընկերներուն եւ անոնցմէ ձեռք անցընել աւելի մանրամասն վկայութիւններ, որովհետև Ակնայ մէջ ձերբակալուած երիտասարդներուն տունէն արդէն գտնուած էր Դաշնակցութեան ծրագիրը, Երիզայէն ուղարկուած: Այս հարեանցի ակնարկէն յետոյ կ'զգուշացնեմ Ա. Ղն. կօմիտէն, որպէս զի յետոյ փոխութեան դրամը դաւաճաններուն չ'ծախսեն. իսկ, երբ ո՛ր և է երիտասարդ քաջալերել կ'ուզեն, արդէն ծանօթ իրենց անցեալով, համակրելի շատ մը առիւծներ կան, որոնք օգնութեան և քաջալերութեան կարօտ են:

ԴԱՆԻԷԼ ՀԱՅՍԳՈՐՄԵԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն



— Յուլիս 27ին շարաթ օրը ժամը 4ին, կարճատև ու անդուծ հիւանդութեան մը հետևանքով մեռաւ Տիկին Նոյեմի ժամկոչեան, դեռ հինգ ամսուան նոր հարս, քսան տարեկան ծաղիկ հասակին մէջ, խոր սուգի մէջ թողլով իր անմխիթար ծնողքն ու իր կենակիցը Տօղդ. Մ. ժամկոչ:

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ կիրակի օրը ժամը 4ին: Ս. Պօղոս Եկեղեցւոյ մէջ դամբանական մը խօսեցաւ Գեր. Տ. Յովսէփ Սրբազան Այվազեան, շեշտելով կեանքին ունայնութիւնը, ի ներկայութեան քաղաքիս եւ Գահիրէէն իջած շատ մ'երևելի ազգայնոց:

Թափօրը դարձաւ Պուրսիև առջևէն ուր խորհրդաւոր հանդիպում մ'ունեցաւ ուրիշ յուզարկաւոր թափօրի մը հետ: Խուռն բազմութեան մը, և բազմաթիւ սպակներու մէջէ դադաղը փոխադրուեցաւ Հայոց գերեզմանատունն, ուր ամփոփուեցան Տիկին Նոյեմի նշխարները:

Խորին ու անկեղծ ցաւակցութեանց զգացումներով լի, մխիթարութիւն կը մաղթենք Շէրիտճեան ու ժամկոչեան ընտանեաց, որոնք հարուածներուն ամենէն ահռելին կրեցին:

— Մեծ. Տիար Առաքել Պէրպէրեան, որ արդէն ծանօթ է իր բարեգործութիւններով ու անձնուէր ջանքերով, այս տարի Մարտ 1էն սկսեալ որդեգրած է 12 տարեկան Սարգիս Մարտիրոս Մաւեան որբը, որ կը դաստիարակուի Արաբկերի որբանոցը:

Որչափ փափաքելի է որ մեր ջոշերը հետևէին օրինակին այս վեհանձն հայրենակցին, և, այսպէս, դէթ մասամբ թեթևցնէին որբախնամ ընկերութիւններու ծանր բեռները:

Այս գեղեցիկ առիթը չը փախցը՝

նելով՝ կը փութանք մեր խնդակցութիւններն ու բարեմաղթութիւններն ընել յիշեալ ազնիւ հայրենակցի նորածնին, որ կուգայ, ութ վաղաթառամ ծաղիկներէ ետք, զարգարել Պէրպէրեան տանը բուրաստանը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

— ՎԻՊԹՕՐԻԱ ՆՈՐ ՔԱՂԱՔԸ. — Դ յիշատակ Անդլիոյ թագուհի ու Հնդկաց կայսրուհի հոգեւոյս Վեհ. Վիգթօրիայի, նոր քաղաք մը հիմնուած է, Աղեքսանդրիոյ հարաւային կողմը 23 քիլոմէր հեռաւորութեամբ, խիստ լայնանիստ ու ընդարձակ դաշտի մը վրայ, որուն մէջէն կտրելով կ'անցնի Ղրանցք մը:

Նոր քաղաքին տեղն այցելել ու զոյնները կը նստին Քաֆր-Տալառ տանող շոգեկառքը. հոն երկրագործական երկաթուղի մը կը զատուի, որ կը տանի ուղղակի Վիգթօրիա: Աղեքսանդրիոյ եւ Վիգթօրիայի մէջև տարածուած է լիճ մը 15 քիլոմէր տրամագծով: 1,760,000 քռ. մէր մակերեսով ունի նոր քաղաքը, որ կրնայ սակայն մեծ հաւ ու հասնիլ 5,000,000 քռ. մէրի: Յատակազիծը շինած է Պ. Ժ. Մարիշալ, Աղեքսանդրիոյ քաղաքապետութեան երկրաչափը, եւ պիտի ունենայ առ այժմ երեք հրապարակ:

- Հրապարակ Վիգթօրիա
- » Ապպաս Հիլմի
- » Աղեքսանդրիոյ

Իր հրասարակները պիտի ունենան 40 մէր, պողտանները 20, իսկ փողոցները 12 մէր լայնութիւն:

Հոյր բեզուն է եւ ամեն տեսակ մշակութեանց յարմար. երկինքը կապոյտ եւ կլիման քաջառողջ: Նոր քաղաքն ունի մեծ հորիզոն մը, շքեղ տեսքով: Ծովեզերքին, ինչպէս նաև շրջակայքին հետ, հաղորդակցութիւնները շատ դիւրին են: Պիտի ունենայ հանրային շէնքեր, դպրոցներ ու եկեղեցիներ ամեն դաւանութեանց համար, որոնց գետիները ձրի պիտի արւին:

տիրոջը կողմէն ամեն հասարակութեանց, որ կը գիմեն խնդրով:

Չուրը մաքուր է ու առատ, եւ, շնորհիւ ջրամբարի մը, որ պիտի շինուի ու դրուի բլուրի մը վրայ, շոգեշարժ մեքենայով մը, Չուրը պիտի կրնայ հասնիլ մինչև վերին դատիկոնները. նաև, ձրի ու բուսական քանակով պիտի բաշխուի պարտէզներուն, դաշտերուն, եւն ուողման համար:

Ուրեմն, այս նոր քաղաքի գետիններէն ստորագրելով մէկ կամ շատ մը բաժիններ, լաւագոյն ու աւելի գործնական յարգանքն եղած կ'ըլլայ ողբացեալ թագուհիին ու կայսրուհիին, միւսոյն ժամանակ, խիստ շահաբեր գործ մը:

Իսկ գնումի դիւրին պայմաններուն շնորհիւ, ամեն ոք կրնայ, քիչ ատենէն, առանց մեծ զոհողութեան, ստացիլ ըլլալ բուսական սիրուն գետնի կտորի մը:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Բարեկորդումները. Նոյօսթի Վրեմիան կը ծանուցանէ թէ՛ ուսու կառավարութիւնը մեծ ծրագիր մը կը պատրաստէ բարենորոգման, որուն գործադրութիւնը պիտի խնդրէ Օսթրովանդակ կայսրութեան մէջ: Երբ Սուլթանը մերժէ ուսուական առաջարկները, Չարին կառավարութիւնը պիտի միջամտութիւնը թախանձէ Տէրութեանց՝ անոնց գործադրութիւնն ընդունել տալու համար:


— Մեծ Դուխ Ալեքսանդր Միխայելովիչ Ելլաըզ զնաց, անցեալ երկուշաբթի, և անհատական տեսակցութիւն մ'ունեցաւ Սուլթանին հետ, որուն յետոյ հրաժեշտ տուաւ, Պօլսէն մեկնելուն առթիւ:

— Պաշխաններու մէջ. Ալքաններուն ու Սերպերուն միջեւ ընդհարում մը տեղի ունեցած է. սադսափ կը տիրէ երկրին մէջ. կացութիւնը վրդովեցուցիչ է: Քօլասքին քաղաքը բոլորովին ամայի է, բնակիչները լեռները փախան. հիմայ Ալքանները կը քալեն

Միթրովիձայի վրայ: Անխուստիելի յար-
ձակում մը կ'սպասուի: Մ. Մաշքով,
ռուսական հիւպատոսը հապճեպով մեկ-
նեցաւ Իւսքիւպէն Միթրովիձա երթա-
լու համար:


— Նորի Պէշ, Սուլթանին Ա. Քար-
տուղարը, ոչ մտքերը հանդարտելու
համար զրկուած էր Ալքանիա եւ նոյն
իսկ կը խոստանար շատ օգտակար բա-
րենորսգումներ գործադրել, Յուլիս 23
ին առաւօտուն, սպառազէն Ալքան հրո-
սակէ մ'սպանուեցաւ: Լուրը սաստիկ
յուզեց Կ. Պօլիսը, մանաւանդ Երլարզ
Քէօշքը, ուր Սուլթանը հրամայեց ան-
միջապէս գտնել ու պատժել սճրա-
գործները:

— Ուրախութեամբ կ'իմանանք թէ՛
Տօղգ. Արտաշէս Կարապետեան, ան-
գրանիկ որդին Տիար Պետրոս Կարա-
պետեանի, Լիօնի կառավարական հի-
ւանդանոցին մէջ Շե՛Լ սը Գլիէիֆ կար-
գուած է: Մեր սրտագին խնդակցու-
թիւնները: Տիար Կարապետեանի երկ-
րորդ որդին Պ. Արմենակ՝ Լիօնի մէջ
իրաւագիտութեան կը հետեւի, իսկ Պ.
Տիրան Գ. որդին, նկարչութիւնը կը
կատարելագործէ Փարիզ:



ԱՋԴԵՐ ԴԵՂԱՐԱՆ ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE



Սոյն միամեայ հաստատութիւնը
վերջերս աւելի ճոխացուցած ենք բե-
րել տալով եւրոպական ամեն տեսակ
ընտիր դեղորայք, սրէսխաշիթէներ եւ
հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով
ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ
պատրաստութեան ու դիներու չափա-

ւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ
օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս
նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու
փորձ մանկաբարձներ:

ԳԻՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՆԵՂԻՆԱՅ ՅԱՊԱՐՁ (Tapissier)

Քաղաքիս երեւելի հայ տաւեերուն
ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-
սակ կահեղէններ, վարադոյր, ևն:


Յանձնարարութիւնք խնամով կը
կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ


ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ա-
մեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու
պատրաստ, կը վաճառէ. ապրանք-
ները մաքուր, սովորն ու ձեւուր. կը
մրցի բոլոր օտար վաճառատանց հետ,
դիներէն աժանութեան կողմէն:



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեկշիյե Հայկ. Մեծ Սրճարանին ետին



Յաճախորդները պիտի գտնեն զով
ու օգուէտ տեղ մը, մաքուր սպասար-
կութիւն, համեղ ու պէս պէս կերա-
կուրներ, քաղցրաւենիք, միրգեր, ըմ-
պելիք ևն. խիստ չափաւոր դիներով:

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի կանխիկ վճարումով ու գոհացու-
ցիչ պայմաններով:

Այցելեցէ՛ք մէկ անգամ ու պիտի
տեսնէք նոր ճաշարանին առաւելու-
թիւնը:

